

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2016

Պատասխաններ

9 -րդ դասարան

2. **մեհյան**-տաճար (հեթանոսական) ,կռատուն, բազնետուն, բագին , կրակատուն
բագին (կրոնական , պատմական)-բազնատուն,ատրուշան, մեհյան, կռատուն, զոհատուն, զոհասեղան
3. իրանյան լեզու
4. **Օթ** (հնգ.)՝ օթևան (**օթ** արմատը առանձին գործածություն չունի):
5. **գինարբուք, աներկբա**
- 8.Գրիգորի վճիռը, **անտարակույս**, աներկբա էր, պատասխանը՝ մերժողական (հաստատական վերաբերական):

10-րդ դասարան

- 1.**ճարակ**-1.հնար , միջոց , 2.դեղ ու դարման
ճարակ-1.անասնակեր , 2. ընդհանրապես ուտելիք,3. արոտ , 4. այն ամենը ,ինչ սպառվում,ոչնչանում է
ճարակ-1.երկիր, նահանգ, բնակության վայր
- 2.**հրդեհի ճարակ դառնալ**- հրդեհից ոչնչանալ
- 3.**գրչագիր**-1.որևէ սկզբնաղբյուրից ընդօրինակված ձեռագիր , 2. հին մատենագրության ձեռագրի հուշարձան, 3. ձեռագիր վիճակում գտնվող
մասունք(եկեղ.)-եկեղեցական սրբերի կմախքի մասեր , 2. փխբ. որևէ նշանավոր մարդու աճյուն կամ աճյունի մասեր, 3.փխբ. որևէ կարգի հին հուշարձանի մնացորդ,
4. փխբ. առհասարակ շատ թանկագին , սրբազան բան
- 5.**ձեռագրապահոց**-հին ձեռագրերը պահելու տուն, շենք
ձեռագիր- ձեռքով գրված գիրք, մատյան , գրչագիր
- 6.**Մատենադարան**-մատյան+դարան (բարդ բառ)

1939 թ. Մատենադարանն Էջմիածնից տեղափոխվել է Երևան: 1945 թ. ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով Երևանում սկսվել է Մատենադարանի շենքի կառուցումը և ավարտվել 1957 թ.: 1959 թ. Մատենադարանը տեղափոխվել է նորակառույց շենքը:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան կամ ուղղակի **Մատենադարան**, հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

7. Մովսես Խորենացի: Ստեղծագործել է գրաբարով:

քերթողահայր, պատմահայր

Գրիգոր Նարեկացի: Ստեղծագործել է գրաբարով:

մեծ աղոթասաց

11-րդ դասարան

1. Սֆիքսը, որ հին հունարենից թարգմանաբար նշանակում է «խեղդող», մի առասպելական էակ է՝ կնոջ գլուխով, առյուծի մարմնով և թաթերով, արծվի թևերով և ցլի պոչով: Սֆինքսի պատկերով կառուցված բազում արձաններ կան աշխարհում, սակայն դրանցից ամենահայտնին *եգիպտական մեծ սֆինքսն է*, որը կառուցել են Քեոփսի բուրգի հարևանությամբ...

2. հառել-հառնել

4. դերվիշ [գոյական]

1. մահմեդականների թափառական կրոնավոր
2. (փոխաբերական) անհասկացող, բթամիտ մարդ
3. (փոխաբերական) թափառական մարդ

տատասկ, [գոյական]

1. Բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող փշոտ տերևներով խոտաբույս
2. (պատմական) որպես պատժիչ միջոց օգտագործվող երկաթե սուր փշեր, որ փռում էին գետնին և դատապարտյալին մերկացրած քարշ էին տալիս դրանց վրայով
3. (ռազմական, պատմական) ռազմական փոքր մեքենա՝ բարձր ու ցածր սուր մեխերով, որ դնում էին կիրճերի մուտքերի մոտ կամ պատնեշների տակ՝ թշնամու շարժումը այդ տեղերով խափանելու համար
4. (փոխաբերական) փուշ

շեղջ, [գոյական]

կույտ, դեզ, կուտակ

6. քար կտրել-արձանանալ

7. հեռու

Գործածված է գոյականի արժեքով:

հեռու-աձական

հեռու-մակբայ

հեռու-կապ

8. հինավուրց –աւր-օր,աւուրց-օրերի, հին օրերի

12-րդ դասարան

2. **ռուբայաթ** – քառատող ավարտուն բանաստեղծություն՝ առավելապես խոհական-փիլիսոփայական բնույթի: Դասական քառյակի մեջ հանգավորվում են առաջին, երկրորդ և չորրորդ տողերը: Ռուբայաթի կամ քառյակի ժանրում ստեղծագործել են Օմար Խայամը, Հաֆեզը, Ռուդաֆին, իսկ հայ հեղինակներից՝ Հովհաննես Թումանյանը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը և ուրիշներ:

բեղվին, [գոյական]

անապատաբնակ քոչվոր արաբ

3. **հողակոշտ-գուղձ**

ասպատակ-ելուզակ

առիքնող-դյուրյական

6. **տվնջյան լուսատու** -արեգակ

7. **առավոտյան**

Գործածված է աձականի արժեքով:

Առավոտյան-մակբայ

8. **յուրովի-իւր-իւր**